Ձևաչափ 1

Տեղեկատվություն
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
ԼՈՌՈՒ մարզային հանձնաժողովի 2020թ. կատարած աշխատանքների վերաբերյալ

1.	Հաշվետու տարվա ընթացքում անցկացված նիստերի օրը և վայրը	Օրեր		Վայրը	Տեղեկատվություն նիստերի և դրա կազմակերպման վայրի մատչելիության վերաբերյալ
		1.	**21.08.2020թ.**	ք.Վանաձոր, Հայքի հրապարակ թիվ 1	մուտքի մոտ թեքահարթակ /դահլիճը II հարկում է/

2.	Նիստերի օրակարգային հարցեր	1.	**21.08.2020թ.** 1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի դիմաց 2015թ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կառուցված թեքահարթակի քանդման մասին /լուսանկարը՝ ստորև/: /Քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ. ՀՀ Լոռու մարզպետարան, Վանաձորի համայնքապետարան, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ/ 2. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն և ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումներով կանոնակարգվող աջակցող միջոցների տրամադրման գործընթացի մասին: /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/ 3. Madre հիմնադրամի աջակցությամբ՝ «VIVA Girls» դրամաշնորհի օժանդակությամբ «Հաշմանդամություն ունեցող հզոր աղջիկներ և կանայք հանուն հզոր Հայաստանի» ծրագրի շրջանակներում 2020թ. օգոստոսի 16-ին կայացած միջմարզային երկրորդ հանդիպման մասին: /Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան/ 4. Համագործակցության աշխատանքի մասին. «Ագաթ» ՀԿ-ի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ ՀՀ Լոռու մարզում իրականացված ընտրատեղամասերի մատչելության և նարառականության համապարփակ

			հետազոտություն: /Զեկ.՝ «Ագաթ» ՀԿ-ի ծրագրերի բաժնի ղեկավար Գայանե Գրիգորյան: Զեկուցողը էլփոստով ուղարկել է տեղեկատվությունը, որը հրապարակվել է նիստի ժամանակ/ 5. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկների մասին: /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/ 6. Այլ հարցեր:

Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի դիմաց կառուցված թեքահարթակը՝ նախքան քանդելը

3.	Նիստերի ընթացքում քննարկ-ված հարցերի լուծման համար առաջարկվող օրենսդրական փոփոխություններ	Քննարկված հարցեր	Առաջարկվող օրենսդրական փոփոխություններ
		Օրենսդրական քննարկումներ չեն եղել:	

4.	Նիստերի ընթացքում տրված հանձնարարականները և որոշումները	Կատարման ժամկետները	Կատարման արդյունքը	Չկատարման պատճառները (եթե չի կատարվել)
1.	**21.08.2020թ.** Քննարկվել է Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի Շ.Ազնավուրի անվ. մշակույթի պալատի դիմաց 2015թ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կառուցված թեքահարթակի քանդման մասին հարցը՝ շահագրգիռ կողմերի /ՀՀ Լոռու մարզպետարան, Վանաձորի համայնքապետարան, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ/ մասնակցությամբ /**ելիցներ՝ 07.08.2020թ. թիվ 01 /104,3/08215-2020, 26.08.2020թ. թիվ 01 /104,3/08944-2020/:** Թեման բարձրաձայնվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Մարդու իրավունքների պաշտպանին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին /նաև որպես Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ/. **ելից՝ 27.08.2020թ. թիվ 01 /104,3/09070-2020/:**	Ժամկետ չի սահմանվել	Հանձնարարությունը կատարվել է	

5.	Տեղեկատվություն Հանձնաժողովի կազմում փոփոխությունների վերաբերյալ	Հանձնաժողովի կազմի փոփոխություն չի կատարվել: Վերջին վերանայումը եղել է ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հուլիսի 30-ի թիվ 489-Ա որոշումով:

6.	Այլ նշումներ	Հանձնաժողովի նիստերը մշտապես եղել են բաց, հրապարակային, դրանք լուսաբանվել են: Նյութերը /նիստի օրակարգ, արձանագրություն և այլն/ տեղադրվել են մարզպետարանի կայք-էջում: